

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՆՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ԱՅԳԵՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի աշխատակազմը, հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, ինչպես նաև 2011 թվականի համայնքի զարգացման տարեկան պլանը, կարևորելով բնակչությանը առավել հետաքրքրող առաջնային խնդիրների լուծման անհրաժեշտությունը, համայնքի ունեցած տնտեսական և ֆինանսական հնարավորությունները, հաշվետու ժամանակաշրջանում համայնքում իրականացրել է որոշակի աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են եղել բնակչության սոցիալ տնտեսական և կենցաղային ոլորտի որոշակի խնդիրների լուծմանը և սոցիալական վիճակի մեղմացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են՝

1. Վերանորոգվել է համայնքի տրակտորը /200.000 դրամ /
2. Նիկիտա Մատինյանին շախմատում ունեցած ձեռքբերումների համար տրվել է համակարգիչ /290.000 / դրամ :
3. Բժշկական ամբուլատորիային տրամադրվել է /175.000/ դրամի ատամնաբուժական սարքավորումներ և նյութեր:
4. Գյուղապետարանի համար ձեռք է բերվել /316.000/ դրամ համակարգիչ և բազմաֆունկցիոնալ սարք:
5. Վերանորոգվել է կանգառ-սրահները, փոխարինվել է ծածկը /350.000/:
6. Մանկապարտեզի երեխաների համար ձեռք է բերվել ներքնակ -բարձ 60 հատ /300.000/:
7. Կայանում /Վորլդ Վիժն/-ի հետ տեղադրվել է խաղահրապարակ:
8. Մշակույթի տան առաջ Քաունթերփարթի հետ տեղադրվել են նստարաններ և անց է կացվել լուսավորություն:
9. Տրամադրվել է օգնություն համայնքի անապահով ընտանիքներին 2 մլն դրամ և ուսանողներին՝ ուսման վճար 1.4 մլն դրամ, թաղման ծախս 400.000 դրամ:
6. Համայնքում իրականացվել են սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները:
Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել են ավագանու 11 նիստ, որոնց արդյունքներով ընդունվել են համապատասխան որոշումներ: Ավագանու որոշումները սահմանված կարգով ուղարկվել են մարզպետարան, նորմատիվ իրավական ակտերը նաև ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
Յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը, հրավիրվում է աշխատակազմի աշխատանքային խորհրդակցություն, որտեղ քննարկվել են համայնքային նշանակության և շտապ լուծում պահանջվող հարցեր:
Բնակչության ընդունելությունը համարվել է համայնքի ղեկավարի և աշխատակազմի ամենօրյա խնդիրը:

Համայնքի բյուջեի համալրմանը ուղղված տեղական հարկերի, տեղական տուրքերը գույքահարկը հողի վարձակալությունը կատարվել է 100% , իսկ հողի սեփականաշնորհումը կատարվել է 80 տոկոսով:

Հավաքագրվել են նաև առևտրի օբյեկտներից օրենսդրությամբ նախատեսված ապրանքների վաճառքի թույլտվության համար նախատեսված վճարները:

Ստուգումներ են իրականացվել առևտրի օբյեկտներում:

Կազմակերպվել է համայնքի վարչական հանձնաժողովի աշխատանքները, որոնց կողմից քննվել են համայնք մուտք եղած վարչական իրավախախտումների գործերը:

Համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովում քննարկվել և ընթացք է տրվել որդեգրմանը և խնամակալությանը վերաբերվող գործերին:

Համայնքում ստեղծվել են համայնքային խնդիրներին առնչվող, օրենսդրությամբ նախատեսված առանձին հանձնաժողովներ և կազմակերպվել է դրանց աշխատանքները:

Համայնքի ներքին աշխատանքային կանոնակարգին համապատասխան, ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ համայնքի ղեկավարի տեղակալի և աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է համայնքի բնակչության ամենօրյա ընդունելություն: Ստացված դիմում բողոքներին սահմանված ժամկետներում պատասխանվել են:

Օրենսդրության փոփոխությունների արդյունքում փոփոխություններ են կատարվել համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում:

Գործավարությունը համայնքում իրականացվել է <Գործավարության կարգին > համապատասխան, մուտք եղած գրությունները ժամանակին պատասխանվել են:

Համայնքի բնակչությունը սիստեմատիկ իրազեկվել է համայնքում իրականացվող աշխատանքների մասին, համայնքային խնդիրներին վերաբերվող հարցերը քննարկվել են բնակչության շրջանում և իրականացվել են միայն նրանց կողմից հավանության արժանանալուց հետո:

Համայնքի անձնակազմը մշտապես զբաղվել է համայնքին վերաբերվող առօրյա խնդիրներով այդ թվում՝

Կազմակերպվել է համայնքի ենթակայության մանկապարտեզի աշխատանքները, միջոցներ է ձեռնապկվել մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակի աճի, ամենօրյա սննդի ավելացմանը, սննդի և սպասարկման որակի բարձրացմանը:

Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու, աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը մասսայականացվել են և բնակչության համար դարձել հասանելի: Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումները ներկայացվել են մարզպետարան համացանցում տեղադրելու համար:

Համայնքի


Լ. Գրիգորյան